

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԲՆԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵԶԻՄԵՐԸ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԿՈՉՈՒԲԱԵՎ

Պետաիրավական երևույթներն ուսումնասիրող տեսությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ վիճակագրական և գնահատողական: Նշված տեսությունները միմյանցից տարբերվում են միևնույն գիտական հիմնախնդրի լուծման մեթոդներով: Վիճակագրական տեսությունները պետաիրավական երևույթների հետազոտման ընթացքում զերծ են մնում որակավորող, գնահատողական բնույթի դատողություններից և բավարարվում են պետության և իրավունքի ստատիկ վիճակի ուսումնասիրմամբ: Նշված ձևով են դեկլարվում իրավունքի պատմական դարոցի, սոցիոլոգիական, հոգեբանական, էտաթիկ պոզիտիվիզմի ներկայացուցիչները և այլն¹:

Մրան հակառակ՝ բնաիրավական հայեցակարգի տեսաբանները փիլիսոփայության դիրքերից են մոտենում պետաիրավական խնդիրներին և հաճախ անդրադառնում են այնպիսի վերացական գաղափարների, ինչպիսիք են արդարությունը, հավասարությունը, ազատությունը, և պարզաբանում, թե ինչպես պետք է ապահովվի վերջիններիս իրացումը, ինչպիսին պետք է լինի իրավունքը, պետությունը և այլն: Այս իմաստով բնաիրավական տեսությունը գնահատողական տեսություն է: Վերջինիս հիմքում դրված են բազմաթիվ գաղափարներ, որոնք իրավագիտակցության տարր են և ընդլայնում են իրավունքի մասին մեր պատկերացումները: Այն նաև բարոյականության բարձրագույն արտահայտություն է, հասարակական զարգացման գերնվաճում:

Բացատրական բառարաններում «բնական» հասկացությունը մեկնաբանվում է որպես մի բան, որը համապատասխանում է բնության օրենքներին, երևույթ, որը սահմանված է բնությունից²: Ձևակազմական իմաստով «բնական իրավունքներ» եզրույթը այնքան էլ հաջող չէ և հաճախ է շփոթ առաջացնում: «Բնական իրավունքը» նույնքան արհեստական է, որքան դրական իրավունքը: Ե՛վ առաջինի, և՛ երկրորդի պարագայում հրամայական է մարդկային կամքի արտահայտությունը³:

¹ Տե՛ս История политических и правовых учений / Под общ. ред. академика РАН, д. ю. н., проф. В. С. Нерсесянца. М., Издательство НОРМА (Издательская группа НОРМА–ИНФРА), М., 2000, История политических и правовых учений: Учебник. Под ред. О. Э. Лейста, М.: Юридическая литература, 1997 և այլն:

² Տե՛ս **Էդուարդ Ադայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 196:

³ Տե՛ս <http://geum.ru/doc/work/43591/index.php>

Ուստի, կարծում ենք, որ հասունացել է պահիր հրաժարվելու «բնական իրավունքներ» ձևակերպումից և իրավունքներ բառի հետ օգտագործելու «հիմնական», «հիմնարար», «անօտարելի» կամ «անքակտելի» որոշիչներից մեկը, որոնք առավել հստակ են ուրվագծում հետազոտվող երևույթի սահմանները: Վերջին ձևակերպումները սույն հոդվածում օգտագործվում են որպես «բնական իրավունքի» հումանիշներ:

Ամփոփելով մասնագիտական գրականության մեջ առկա մոտեցումները՝ բնաիրավական հայեցակարգի յուսաբանման համար ստորև կհետազոտենք բնաիրավական տեսության հետևյալ թեզիսները.

1. պետության սահմանած դրական իրավունքին (օրենսդրությամբ) զուգահեռ՝ գոյություն ունեն վերօրենսդրական բնական իրավունքներ և բնական օրենքներ,
2. բնական իրավունքը օրենսդրության (դրական իրավունքի) գնահատման չափանիշ է,
3. բնական իրավունքների հիմքը այնպիսի բարոյական արժեքներն են, ինչպիսիք են արդարությունը, հավասարությունը, ազատությունը,
4. իրավունքները ի բնե ունեն ինքնավար կիրառություն:

1. Դրական իրավունքին զուգահեռ՝ գոյություն ունեն բնական իրավունքներ և բնական օրենքներ

«Բնական իրավունքների մայրը մարդու բնությունն է»⁴: Հրոցիուսի այս միտքն արտահայտում է բնաիրավական հայեցակարգի ամբողջ առանցքը: Բնաիրավական տեսության դրոշակակիրները հակադրում են բնական և դրական իրավունքները: Այս հակադրության հիմքում ընկած է այն գաղափարը, որ միակ և ճշմարիտ իրավունքը ի բնե իրավունքներն են: Նշված բանավեճը հանգեցրել է խնդրո առարկա բնագավառի գլխավոր գիտական պրոբլեմներից մեկի առաջացմանը, որը կապված է բնական իրավունքների ծագումնաբանության հետ: Ծագումնաբանական խնդիրը լուծելով՝ կարող ենք եզրահանգումներ անել բնական իրավունքների գոյության կամ բացակայության մասին:

Որտեղից են ծագել բնական իրավունքները՝ Աստծուց, մարդու գիտակցությունից, թե ընդհանրապես այլ հենքից: Այս հարցի պատասխանից են մեծ մասամբ կախված մոտեցումների տարբերությունները:

Հ. Հրոցիուսը բնական իրավունքների սկիզբը տեսնում է մարդկային էության մեջ: Հեղինակի համար բնական իրավունքները գոյություն ունեն աստվածային հեղինակությունից անկախ: Հրոցիուսը առհասարակ հղում չի կատարում Աստծուն: Բնական իրավունքները պահպանում են իրենց ուժը նաև Աստծո բացակայության պայմաններում⁵: Ըստ այդ մոտեցման՝ բնական իրավունքները ծագել են հասարակական

⁴ Гроций Г. О праве войны и мира. М., 1994, с. 48.

⁵ Տե՛ս նույն տեղը, էջ 6:

զարգացման ընթացքում և էության մարդածին են: Այլ խոսքով՝ բնական իրավունքների սկիզբը մարդու մեջ է, բխում է վերջինիս բնությունից: Նման մոտեցումը բավականին ռացիոնալ մեկնաբանում է բնական իրավունքների ծագումը՝ այն կապելով մարդու ներաշխարհի հետ: Սա նշանակում է, որ բնական իրավունքները ստեղծվել են **մարդու կողմից մարդու համար:**

Մրան հակառակ՝ մասնագիտական գրականության մեջ տեսակետ է արտահայտվել, որ բնական իրավունքները հաստատում են բացարձակ և մշտնջենական իրավական սկզբունքներ, որոնց հիմքում դրված է աստվածային կամքը կամ մարդկային բանականության բարձրագույն հատկությունները, որոնք արտահայտում են աստվածային ճշմարտությունը⁶: Ըստ էության՝ այս մոտեցումը առավել մետաֆիզիկական է, քան գիտական կամ իրավաբանական և հատուկ է թեոլոգիական տարատեսակ տեսություններին, որոնք պետության և իրավունքի ծագումը կապում են աստվածային արարչագործության հետ: Գիտության տեսանկյունից անհնար է բնական իրավունքների ծագումը կապել Բարձրալիի հետ և հիմնավորել նման տեսակետը, քանի որ անհրաժեշտ կլինի գիտականորեն հիմնավորել հենց Աստծո գոյությունը:

Բնական իրավունքների ոչ մարդակերտ լինելը հիմնավորում է նաև Վ. Ներսիսյանը: Բնական իրավունքը միշտ և ամենուրեք առկա, արտաքինից մարդուն տրված, կոնկրետ վայրում և ժամանակում ելակետային համարվող, իրավաբանական գործընթացների հիմքում ընկած երևույթ է⁷:

Լեգիստական իրավաբանական ներկայացուցիչները պաշտամունքի առարկա են դարձնում պետության իրավաստեղծ գործունեության արդյունքները⁸՝ գրված իրավունքը: Այս տեսակետի կողմնակիցները բավականին ռադիկալ են իրենց գաղափարաբանությունում և չեն ընդունում փիլիսոփայական, արժեքաբանական կատեգորիաներ իրավական միջավայրում: Լեգիստական իրավաբանական բնութագրական է իրավունքի և օրենքի նույնացումը⁹: Այս մոտեցումը բավականին ծայրահեղացված է, քանի որ նորմաստեղծ մարմնի ցանկացած ակտ համարում է իրավունք: Ընդհանուր առմամբ այս տեսակետը բացառում է բնական իրավունքների գոյությունը, եթե դրանք ամրագրված չեն իրավունքի աղբյուրներում: Այսպիսի գաղափարաբանությունը որքան էլ որ վտանգավոր է, բայցևայնպես իրատեսական է: Այսպիսի մո-

⁶ Տե՛ս **Верховодов Е. В.** Генезис теории естественного права в Западной Европе, автореф. ... кандидата юридических наук: 12.00.01 / Нижегород. гос. ун-т им. Н. И. Лобачевского. Нижний Новгород, 2001, էջ 16:

⁷ Տե՛ս «Проблемы общей теории права и государства. Учебник для вузов» / Н. В. Варламова и др.; под ред. В.С. Нерсесянца. – М., 2001, էջ 152-153:

⁸ Տե՛ս <https://studopedia.org/9-113083.html>

⁹ Տե՛ս «Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ», հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Եր., 2014, էջ 222:

դելում բնական հռչակված իրավունքները պաշտպանվում են իրավունքով: Թերևս այս տեսակետի գլխավոր թերությունն այն է, որ հնարավորություն է ստեղծվում ժխտելու որոշ բնական իրավունքներ և բացառելու իրավական պաշտպանությունը:

Այս հարցի կապակցությամբ գտնում ենք, որ **չկան երկնքից մարդուն տրված իրավունքներ. կան մարդու կողմից ստեղծված բնական իրավունքներ**: Բնական իրավունքները մարդածին են, ոչ թե բնությունից տրված օբյեկտիվ երևույթներ: Մեր այս մոտեցումը պատճառաբանվում է այն բանով, որ գիտականորեն ապացուցված չէ Աստծո գոյությունը: Գտնում ենք, որ բնական իրավունքները հասարակական զարգացման արդյունք են: Նշված սկզբունքայնությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ գործնականում ցանկացած իրավունք կարելի է համարել բնական, բնությունից կամ Աստծուց տրված, ինչպես բավականին վտանգավոր գործընթաց է: Փոխարենը առաջարկում ենք ընդունել այն պարզ իրողությունը, որ բոլոր իրավունքները և բոլոր սահմանափակումները ստեղծել է մարդը՝ իր հասարակական կյանքը կարգավորելու համար: Պարզապես կան որոշ իրավունքներ, որոնք իրենց նշանակությամբ այնքան հիմնարար են, որ մերձենում են աստվածային արարչագործությանը, սակայն քանի դեռ Աստված չի խոսել մեզ հետ, մենք չենք կարող պնդել, որ այս կամ այն իրավունքը ունի աստվածային ծագում:

2. Բնական իրավունքը չափանիշ է

Մարդու բնական իրավունքները մարդու իրավունքների ոլորտում ունեն սահմանադիր նշանակություն: Վերջինս իրավական ինդիկատոր է, որով ստուգվում է օրենսդրությունը: Ռ. Շտամլերը բնական իրավունքը համարում է գիտականորեն անհավանական, սակայն գտնում է, որ կարիք չկա առարկելու դրան: Բնական իրավունքը նախատեսված չէ դրական իրավունքի հետ գործնականում կիրառելու համար, այլ ընդամենը օրենսդրի համար ուղեցույց է՝ քննադատական և ուղղորդող մասշտաբ: Բնական իրավունքի բովանդակությունը, ըստ էության, չի կարող լինել անփոփոխ, քանի որ վերջինս գոյություն ունի սոցիալական փոփոխական հարաբերություններում: Սրանով առաջ է քաշվում «փոփոխվող բովանդակությամբ բնական իրավունքի» գաղափարը: Շտամլերը բնական իրավունքը ճշմարիտ է համարում իրական կյանքում առաջացած հարաբերությունների նկատմամբ¹⁰: Ընդ որում, հեղինակը այդ դրույթները դիտարկում է բարոյականության հարթությունում: Այս իմաստով կարելի է պնդել, որ բնական իրավունքները գործող իրավունք չեն, այլ այդ իրավունքը ստեղծող գործոնների փո-

¹⁰ Տե՛ս <https://lawbook.online/filosofiya-prava-knigi/prilozhenie-opredeleniya-estestvennogo-prava-22368.html>

փոխման պահանջներ: Ֆրիդրիխ Յոդլը բնական իրավունքի մասին իր դատողությունները սկսում է այն պնդումից, որ բնական իրավունքի հասկացությունը «մետաֆիզիկական և սպեկուլյատիվ փիլիսոփայության կեղծ պրոդուկտ և մնացորդ է»: Ըստ հեղինակի՝ բնաիրավական հայեցակարգը, ըստ էության, գործող կարգի քննադատությունն է՝ միտված վերջինիս կատարելագործմանը: Ընդ որում, արժեքավոր է Յոդլի այն դիտարկումը, որ **բնաիրավական համարվող դրույթները բխում են հեղինակավոր մարդկանցից, տարբեր սոցիալական շերտերից, անընդհատ գտնվում են շարժման մեջ և չունեն ստատիկ բովանդակություն**¹¹:

Լ. Շտրաուսը գտնում է, որ օրենքները և վճիռները լինում են անարդար: Ընդունելով այսպիսի դատողությունը՝ կարելի է ենթադրել, որ գոյություն ունի արդարության և անարդարության չափանիշ, որը կախում չունի դրական իրավունքից և ավելի բարձր է, քան վերջինս. բնական իրավունքի միջոցով ենք մենք գնահատում դրական իրավունքը¹²:

Բնաիրավական հայեցակարգի գնահատողական գործառույթը բավականին բարդ հիմնախնդիր է: Այն ենթադրում է բնաիրավական թեզիսների ներգործություն պոզիտիվ իրավունքի վրա՝ որպես օրենսդրման գործընթացում համամարդկային պահանջների հաշվառում:

Բնաիրավական հայեցակարգը արժեքային չափանիշ է, որը դրական իրավունքի մասին տալիս է պատկերացումներ բարու և չարի, արդարի և անարդարի, բարոյականի և ոչ բարոյականի համատեքստում: Բնական իրավունքը չափանիշների հավաքածու է և ոչ թե անմիջականորեն գործող իրավունք: Նման մոտեցման ժխտումը ուղղակիորեն ենթադրում է իրավակիրառ պրակտիկայում հղում կատարել այնպիսի արժեքների, որոնք առանձին դեպքերում չունեն նորմատիվ ամրագրում: Ասվածը հատկապես վերաբերում է դատարաններին, երբ վերջիններս իրականացնում են արդարադատություն: Այս առումով դժվար է հասկանալ՝ ինչպես կարելի է հղումներ կատարել բնական իրավունքի ոչ հստակ և վիճարկելի բովանդակությանը, որի գոյությունն ինքնին կասկածի տակ է: Դատավորի պարտքը գործող օրենսդրությունը մեկնաբանելն է, այլ ոչ թե բարձրագույն, վերնարդկային իրավական համակարգի մասին սեփական հայացքներն արտահայտելը:

Բնական իրավունքին վերագրվում են բազմաթիվ որակներ, ինչպիսիք են խելամիտը, արդարը, ազնիվը, հավասարը, օրենքների իրավականությունը կամ ոչ իրավականությունը և այլն: Բնաիրավական հայեցակարգի գործնական կիրառությունը ենթադրում է պոզիտիվ իրավունքի այն դրույթների ժխտում և չկիրառում, որոնք հակասում են մարդկային բնատուր իրավունքի գաղափարին: Առաջին հայացքից թվում է, թե առաջ է քաշվում անիրագործելի խնդիր: Սակայն համա-

¹¹ Տե՛ս նույն տեղը:

¹² Տե՛ս **Штраус Л. III**. Естественное право и история, М., 2007, էջ 8:

պատասխան տեսական հիմնավորումներից հետո այդ խնդիրը հնարավոր է հաղթահարել:

Իրավունքի ընդհանուր տեսությունը մշակել է իրակիրառման երեք տեսակ՝ *Intre legem* (ըստ օրենքի), *praeter legem* (օրենքից դուրս) և *contra legem* (օրենքին հակառակ):

Contra legem իրավակիրառման դեպքում իրավասու մարմնի ակտով վերացվում կամ փոփոխվում են օրենքի կարգավորումները: Այս ժամանակ առկա է օրենքի որոշակի կարգավորում, սակայն իրավակիրառ մարմինը, ելնելով որոշակի իրավաչափ նպատակներից, կայացնում է օրենքի կարգավորմանը հակառակ որոշում¹³: Կարծում ենք՝ *contra legem*-ի կիրառմամբ բնաիրավական հայեցակարգի դրույթները կարող են ստանալ գործնական կիրառություն այն առումով, որ դատավորը, տեսնելով, որ օրենքի դրույթը հակասում է բնական իրավունքներին, կարող է կայացնել դրական օրենքին հակասող որոշում: Միակ խնդիրն այն է, թե որոնք են մարդու բնական իրավունքները: Կարծում ենք՝ արդի աշխարհում հասարակությունները իրենք են որոշում իրենց համար բնական համարվող իրավունքները, որոնք ամրագրվում են երկրների սահմանադրություններում, մարդու իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագրերում: Այս առումով բնական իրավունքի դրույթները արդեն իսկ ունեն նորմատիվ բովանդակություն և իրավակիրառման ընթացքում կարող են անմիջականորեն կիրառվել, եթե պոզիտիվ իրավունքի դրույթները հակասեն դրան: Բնաիրավական հայեցակարգի գնահատողական գործառույթի իրացման հաջորդ մակարդակը իրավաստեղծումն է, որի ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել մարդու բնական իրավունքները և չընդունել այնպիսի նորմեր, որոնք հակասեն մարդու շահերին: Ըստ այդմ կարող ենք արձանագրել, որ բնական իրավունքի տեսությունը չի պատասխանում այն հարցին, թե **ինչ է** իրավունքը: Քննարկվող տեսությունը մետաիրավական է և կոչված է պատասխանելու որակապես այլ հարցի. մասնավորապես՝ **ինչպիսին պետք է լինի** իրավունքը: Ակնառու է բնական իրավունքի տեսության էտալոնային դերակատարումը: Այն իր ուղեցույցներով միտված է ձևավորելու գաղափարների համակարգ, որի վրա պետք է կառուցվի դրական իրավունքը:

Բնական իրավունքի գնահատողական գործառույթը մարդկային մտքի արդյունք է: Մարդկային իդեալները միշտ էլ մարդածին են և փոփոխական: Բնական իրավունքը մարդածին իդեալ է, այլ ոչ թե բնատուր մարդկային հատկություն: Մտորն կքննարկենք Ջոն Լոկի փորձը, որը լավագույն օրինակներից է: Նախքան Լոկը համամարդկային իդեալ, բնական իրավունք էր միապետին հնազանդվելը, որ գիտուն մարդկանց շնորհիվ ձևափոխվեց նոր իդեալներով: Քանի դեռ իրա-

¹³ Տե՛ս «Պետության և իրավունքի տեսություն», Եր., 2016, էջ 514-515:

վունքներն ու արժեքները փոխվում են, փոփոխվում է մարդկային բնատուրի գաղափարը: Բացառված չէ, որ ապագայում ինչ-որ ձեռք փոփոխի բնական իրավունքների մերօրյա ցանկն ու հայեցակարգը՝ այն համապատասխանեցնելով նոր ստանդարտներին:

Այստեղից հետևում է մեր երկրորդ դիրքորոշումը. **բնական իրավունքները մարդածին իդեալներ են, որոնք հանդես են գալիս դրական իրավունքը գնահատող չափանիշի դերում:**

3. Բնական իրավունքի հիմքը արդարության, հավասարության, ազատության գաղափարներն են

Բնահրավական տեսության զարգացման բոլոր փուլերում հեղինակները փորձել են գտնել բնական իրավունքի տեսության առանցքը¹⁴ կազմող հիմնարար իրավունքների ցանկը: Նշված հեղինակների վկայակոչած իրավունքները ինչպես առանձին, այնպես էլ համակցությամբ անօտարելի իրավունքների սպառիչ համակարգը տալու փորձեր են: Գլխավոր իրավունքների որոնումը իմաստագուրկ է, քանի որ զարգացող առօրյան կարող է փոփոխել բնական իրավունքների հարաբերակցությունը: Թեպետ մարդկային իրավափիլիսոփայական միտքը փորձում է գտնել համընդհանուր իրավունքը (իրավունքների խումբը), կարծում ենք, **քանի դեռ այս ամենի արարիչը չի խոսել մեզ հետ, մենք չենք կարող տալ բնական իրավունքների սպառիչ թվարկումը:**

Անընդունելի պետք է համարել բնական իրավունքների բացարձակացված սահմանումները, քանի որ այդ գաղափարները փոփոխական են: Ընդամենը կարելի է ընդունել, որ կան մարդկային որոշակի իրավունքներ, որոնք անօտարելի են, և դրանք անհրաժեշտ է պաշտպանել օրենսդիր և իրավակիրառ արակտիկայում: Իսկ թե ինչպիսի համակարգ կունենան այդ իրավունքները, կախված է տվյալ ժողովրդի ազգային առանձնահատկություններից. ամերիկյան հեղափոխության տեսաբանների համար դրանք են կյանքը, հավասարությունն ու երջանկության ձգտումը¹⁵, հայերի համար՝ կյանքը, խոշտանգման արգելքը, կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը, խտրակա-

¹⁴ Ա. Կուլինսկին, Մ. Կովալովը, Վ. Չիսիկվաձեն բնական են համարում կյանքի իրավունքը, Բ. Պետրուխինը՝ ազատության իրավունքը, հավասարությունը բնական իրավունք է դիտարկում Ա. Վենգերովը, անձի արժանապատվությունը՝ Ֆ. Ռուդինսկին, անձի անձեռնմխելիության իրավունքը՝ Բ. Տոլկաչովը, առողջության պահպանման իրավունքը՝ Ն. Մալեինը, անձնական կյանքի անձեռնմխելիության, բարվոք շրջակա միջավայրի իրավունքները՝ Վ. Կարտաշկինը, Ե. Լուկաշևան՝ իր նմանների հետ հարողակցվելու, վերարտադրության իրավունքները, Վ. Բաբանը՝ սեփականության իրավունքը, Ա. Խարմատին՝ անհատականության իրավունքը, Մ.Մալեինան՝ անվտանգության և ճնշմանը ընդդիմանալու իրավունքները, Վ.Ներսիսյանը՝ ազգերի՝ իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքը, Ս. Ալեկսենը՝ կյանքը, ազատությունը, երջանկության ձգտումը, և այլն:

¹⁵ Տե՛ս www.russiantampa.com/about_usa/declaration.php 12.05.2017

նության արգելքը և այլն¹⁶, եվրոպական հանրության համար՝ ստրկության արգելումը, անձնական ազատությունը, հավաքների ազատությունը և այլն¹⁷: Ընդ որում, բերված օրինակները ամեննին էլ պատահական չեն: Դրանք բնական իրավունքների արտաքին ամրագրման տարբեր մակարդակներ են: Մարդու բնական իրավունքները կարող են արտահայտվել հռչակագրերում, երկրների սահմանադրություններում, մարդու իրավունքներին վերաբերող միջազգային ունիվերսալ պայմանագրերում կամ էլ գիտուն մարդկանց եզրակացություններում:

Պետք է քննդատորեն մոտենալ բոլոր այն մոտեցումներին, համաձայն որոնց՝ մարդու բնական իրավունքները վերմարդկային են կամ Աստծո բարի կամքի դրսևորումներ: Մարդու իրավունքների տեսությունը, բնածին իրավունքների գաղափարը յուրաքանչյուր դեպքում արտահայտվում են առանձին այրերի, ազգերի, ժողովուրդների հայացքներում և օբյեկտիվանում են բացառապես առանձին պահանջումներ բավարարող իրավունքներում, որոնք արտացոլվում են օրվա խնդիրների լույսի ներքո:

Օրինակ՝ կար պատմական ժամանակաշրջան, երբ միապետին հնազանդ լինելը համարվում էր մարդու ի ծնե որակ, որ Աստված մարդուն ստեղծել է միապետին հնազանդ լինելու համար: Սրա դեմ հանդես եկավ Ջոն Լոկը «Երկու տրակտատ իշխանության մասին» աշխատությունում, որում հետևողականորեն հիմնավորում է այն գաղափարը, որ եթե իշխանությունները թերանում են իրենց պարտականություններում, կարող են արժանանալ ժողովրդի դիմադրությանը և փոխարինվել նորերով¹⁸: Ընդ որում, Լոկի նորարարական այս գաղափարը դրվեց բուրժուական հեղափոխությունների հիմքում և առնվազն սասանեց «միապետին հնազանդ լինելու բնական իրավունքը»: Այստեղ էլ՝ ավելի է ամրապնդվում վերը բերված թեզը, որի համաձայն՝ քանի դեռ «Աստված» չի խոսել մեզ հետ, մենք չենք կարող տալ մարդու բնական իրավունքների սպառիչ թվարկումը, իսկ առանձին սահմանման փորձերն ընդամենը սուբյեկտիվացված բնական իրավունքներ են այն պարզ պատճառով, որ չկա օբյեկտիվ ճշմարտություն, յուրաքանչյուրը ճշմարտացի է յուրովի, ուստի յուրաքանչյուր կարծիք ճշմարիտ է: Ասվածը պետք չէ դիտարկել որպես փակուղի, քանի որ *minimum minimorum* իրավական գործիքի կիրառմամբ նշված խնդիրը կարելի է հաղթահարել: Վերջինիս էությունն այն է, որ սահմանում է նվազագույն ստանդարտներ, որոնցից ածանցվում է համակարգը: Մարդու

¹⁶ Տե՛ս 22 Սահմանադրություն, 24, 26, 30, 35 հոդվածները:

¹⁷ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիա, http://www.gov.am/u_files/file/kron/2%620EuoroConvent-Arm.pdf

¹⁸ Տե՛ս **Ջոն Լոկ**, Երկու տրակտատ իշխանության մասին, <http://oll.libertyfund.org/titles/locke-the-two-treatises-of-civil-government-hollis-ed>:

բնական իրավունքների հրաշալի minimum minimorum օրինակներ են «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը» և այլն:

Ըստ մեզ՝ մարդու minimum minimorum իրավունքներն են՝ արդար վերաբերմունքի արժանանալու, արժանապատվությունը հարգելու, հոգևոր ավտոնոմիայի, սեփական ճակատագիրը ազատորեն տնօրինելու իրավունքները և այլն: Սրանք այն անհրաժեշտ գաղափարներն են, որոնց սպեկտրը այնքան լայն է, որ կարող է ներառել ցանկացած ընթացիկ իրավունք¹⁹: Այս դատողություններով մենք ցանկանում ենք ցույց տալ, որ չկա բնական իրավունքների սպառիչ համակարգ. ժամանակը և իրողությունները փոխում են դրանք:

4. Բնական իրավունքը ինքնակիրառվող ֆենոմեն է

Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել կարծիքի, որ բնական իրավունքները անկախ են դրական իրավունքից և ունեն ավտոնոմ կիրառություն²⁰: Բնաիրավական հայեցակարգի այս թեզիսը ևս վիճարկելի է այն առումով, որ բնական իրավունքները չեն կարող ինքնիրացվել. դրանց կենսագործման համար անհրաժեշտ է պետական կամ վերապետական մակարդակում այդպիսի իրավունքների ճանաչում և վավերացում: Այլապես, բնական իրավունքները կմնան հռչակագրային կանխադրույթներ: Այո, բնական իրավունքները պետք է ինքնիրացվեն, սակայն արդի աշխարհում անհնար է պատկերացնել դրանց կիրառումը առանց բնական իրավունքի նորմատիվացման:

Նման պայմաններում մնում է արձանագրել, որ քննարկվող թեզիսը ևս արդիական չէ և վերանայման անհրաժեշտություն կա՝ պայմանավորված գլոբալացման արդի գործընթացներով:

Բնական իրավունքի տեսության լուսաբանման համար առանցքային է նաև դրա արժեքը: Այս առթիվ Լեո Շտրաուսը նշում է, որ բնական իրավունքից հրաժարվելը նշանակում է ընդունել, որ ցանկացած իրավունք դրական իրավունք է, հետևաբար՝ իրավունքը միայն օրենսդրի և դատարանի ստեղծածն է²¹: Բնաիրավական հայեցակարգի արժևորումը իրավական համակարգերում տարբեր է: Ռոմանագերմանական ի-

¹⁹ Օրինակ՝ սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքից ածանցյալ են ազատ տեղաշարժի, կրթության, ընտանիք ձևավորելու իրավունքները, արդար վերաբերմունքի արժանանալու իրավունքից՝ արդար դատաքննության, աշխատանքի արդարացի վարձատրության, իրավունքների հարգման իրավունքները և այլն:

²⁰ См. u **Рассказов Л. П.** Теория государства и права: углубленный курс: Учебник (Высшее образование: Бакалавриат), М.: РИОР:ИНФРА, М., 2015, էջ 221:

²¹ См. u **Штраус Л. III.** նշվ. աշխ., էջ 8:

րավունքի տիրույթում, որոշ դեպքերում նաև անգլո-ամերիկյան իրավական համակարգում, բնաիրավական տեսությունը այլևս հայեցակարգ չէ, տեսություն չէ, այլ իրավակարգի որակապես ինքնուրույն մակարդակ է: Ավանդական, կրոնական և սոցիալիստական իրավական համակարգերում բնաիրավական տեսության արժեքը առհասարակ ժխտվում է: Այնուամենայնիվ, բնաիրավական հայեցակարգի ընդհանրական, ընդգծված արժեքն այն է, որ վերջինս ճանաչում է մարդու իրավունքներն ու ազատությունները որպես անքակտելի, անօտարելի, սահմանում է այն նվազագույն անհրաժեշտ իրավունքների ցանկը, որոնք տրված են մարդուն «մարդ» լինելու փաստով:

Անհրաժեշտ է արձանագրել, որ բնական իրավունքի տեսությունն ունի իր առավելություններն ու թերությունները: Դրական կողմն այն է, որ ճանաչում է մարդու իրավունքներն ու ազատությունները որպես անքակտելի, անօտարելի, սահմանում է այն նվազագույն անհրաժեշտ իրավունքների ցանկը, որոնք տրված են մարդուն «մարդ» լինելու փաստով: Բնաիրավական հայեցակարգի պրոգրեսիվ դրույթներից է նաև իրավական օրենքի գաղափարի մշակումը: Իրավական լինելու համար օրենքը պետք է համապատասխանի այնպիսի բարոյական արժեքների, ինչպիսիք են արդարությունը, ազատությունը, հավասարությունը և այլն:

Թերություններից թերևս կարելի է նշել այն, որ տեղի է ունենում վերացարկված գաղափարների ուռճացում, ինչը հանգեցնում է դրական օրենքի դերի նվազման: Բնական իրավունքի տեսությունը կապված է ոչ այնքան օրենքի հետ, որքան իրավական գիտակցության, որը իսկապես կարող է տարբեր լինել տարբեր մարդկանց համար, ինչը վերջին հաշվով կարող է պատճառ դառնալ բնական իրավունքների սխալ պատկերացումների, մեկնաբանության և ինպլեմենտացիայի:

Որպես բնաիրավական տեսության հետազոտության ամփոփում՝ կարող ենք վստահորեն արձանագրել, որ բնական իրավունքի տեսությունը ծագեց և զարգացավ սուր բանավեճերի արդյունքում: Իրավական քարտեզի իմաստով այն ընդգրկեց աշխարհի ներկա և նախկին հասարակությունները: Այս տեսության ներսում պատմականորեն ձևավորվեց հայացքների այնպիսի համախումբ, համաձայն որի՝ մարդը ծնվելու փաստով ունի որոշակի իրավունքներ և ազատություններ, որոնք վերօրենսդրական մակարդակում են, նախորդում են դրան և օրենքի (պոզիտիվ իմաստով) միջոցով չեն կարող նեղացվել կամ սահմանափակվել:

Բանալի բառեր – *բնաիրավական հայեցակարգ, մարդու իրավունքներ, բնական իրավունք, պոզիտիվ իրավունք*

АЛЕКСАНДР КОЧУБАЕВ – Основные тезисы естественно-правовой концепции прав человека. – Статья посвящена одному из важнейших вопросов общей теории права – естественно-правовой концепции прав человека. В ней проанализированы основные тезисы естественно-правовой доктрины, значимость обсуждаемой теории, преимущества и недостатки с точки зрения современной глобализации.

Ключевые слова: *естественно-правовая концепция, права человека, естественное право, позитивное право*

ALEXANDR KOCHUBAEV – The Main Issues of the Natural Law Theory of Human Rights. – This scientific article is devoted to the one of the most important issues of the general theory of law - the natural law theory of human rights. The main issues and the importance of the natural law doctrine, as well as the advantages and disadvantages of the theory under discussion from the point of view of modern globalization are discussed in the article presented.

Key Words: *natural law theory, human rights, natural law, positive law*

Ներկայացվել է՝ 15.05.2020,
գրախոսվել է՝ 15.06.2020,
ընդունվել է տպագրության՝ 30.09.2020